

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ-
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Եկեղեցին և
համաշխարհայնացումը
(քննարկման նյութեր)**

ՄԲ Էջմիածին 2013

**Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ
Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական
բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի
«Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի
շրջանակներում կազմակերպված «Եկեղեցին և
համաշխարհայնացումը» թեմայով քննարկման (20
դեկտեմբերի 2013 թ., Սբ Էջմիածին) նյութերը:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Զեկույց Ա – Եկեղեցին և համաշխարհայնացումը ..	7
Զեկույց Բ – Կրոնը համաշխարհայնացման արդի մարտահրավերների համատեքստում	17
Ամփոփում.....	43

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին համաշխարհայնացումը դարձել է այն հիմնական գործոններից մեկը, որն իր զգալի ազդեցությունն է թողնում համաշխարհային քաղաքականության, տնտեսության և մշակույթի զարգացման վրա: Վերջին տասնամյակների ընթացքում այն ավելի ու ավելի է իր վրա սևեռում համաշխարհային հանրության ուշադրությունը՝ իբրև մարդկային կյանքի ժամանակակից փուլի անբաժանելի բաղկացուցիչ:

Այսօր մարդը նույնիսկ ցանկության դեպքում չի կարող ապրել ամբողջովին մեկուսացած՝ հեռու հանրային կյանքի իրադարձություններից ու զարգացումներից: Հասարակական և անհատական կյանքին առնչվող որևէ լուրջ թեմա արծարծելիս անպայմանորեն բախվում ենք համաշխարհայնացման խնդիրներին: Դրանք ամեն տեղ են՝ քաղաքականության, տնտեսության, կրոնի, արվեստի և այլ ոլորտներում: Սակայն համաշխարհայնացման խնդիրները քննարկելիս մարդիկ հաճախ են կանգնում հետևյալ առանցքային հարցերի առջև՝ արդյոք ի՞նչ է իրենից ներկայացնում ամբողջովին համաշխարհայնացված հասարակությունը և ի՞նչ հետևանքներ այն կունենա աշխարհի վրա: Արդյոք այն կհանգեցնի բազմաբևեռության ու քառսի, թե՛ հարաբերական ներդաշնակության: Քննարկվող հարցերի սրությունը բերել է այն բանին, որ համաշխարհայնացումն իբրև երևույթ այսօր գիտական աշխարհում դարձել է ամենաքննարկվող ու հրատապ թեմաներից մեկը:

Մարդկային կյանքի վրա շոշափելի ազդեցություն ունեցող այդ երևույթի իմաստավորումից անմասն չէ նաև Քրիստոնեական Եկեղեցին: Եկեղեցին մտահոգ է, թե համաշխարհայնացումը, որպես քաղաքական, տնտեսական, մշակութային, էկոլոգիական, տեխնիկական, կրոնական և այլ ասպեկտներ իր մեջ ներառող բազմասահման գործընթաց, ի՛նչ հնարավոր հետևանքներ կարող է ունենալ անձի ու հասարակության վրա՝ հատկապես հոգևոր-բարոյական ու ազգային արժեքների տեսանկյունից:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի նախաձեռնությամբ «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Եկեղեցին և համաշխարհայնացումը» քննարկումը մի փոքրիկ փորձ է՝ ուղղված համաշխարհայնացման երևույթի իմաստավորմանը եկեղեցական տեսանկյունից:

Վահրամ քահանա Մելիքյան

ԶԵԿՈՒՅՑ Ա

*Տ. Հուսիկ արեղա Մմբատյան
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան*

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Վերջին երկու տասնամյակների ընթացքում, երբ համաշխարհային հանրությունը վերջապես գիտակցեց, որ կանգնած է համաշխարհայնացման փորձության առջև, հասարակական տարբեր շրջանակներում՝ քաղաքական, գիտական, իրավական, կրոնական և այլն, սկսվել է այս նոր իրականության, դրա ակունքների, հատկանիշների, ազդեցության ու հնարավոր հետևանքների իմաստավորման ակտիվ գործընթաց:

Համաշխարհայնացումն արդի ժամանակաշրջանի խոշոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ֆենոմեն է: Է. Գիդենսի սահմանման համաձայն՝ համաշխարհայնացումը ժամանակակից մարդկային քաղաքակրթությունը կազմող հասարակությունների աճող փոխկախվածությունն է, որը զգալի ազդեցություն է գործում սոցիալական և մշակութային կյանքի բոլոր ասպեկտների վրա¹: Այսօր քաղաքական ոլորտում գործում են «համաշխարհային հանրությանը» միավորող միջազգային հաստատություններ, տնտեսության ու ֆինանսների ոլորտում առկա է մրցակցություն, որտեղ

¹ Эгильский Е.Э., Матецкий А.В., Самыгин С.И., Новые религиозные движения. Современные нетрадиционные религии и эзотерические учения, М.2011, с.49.

հաստատվում են կոնկրետ ստանդարտներ, և վերջապես աշխարհում տարբեր մշակույթների ակտիվ փոխազդեցությունն ու փոխներթափանցումը ստեղծում է նոր ընդհանուր «մշակութային դաշտ»: Համաշխարհայնացումը մատնանշում է պատմական գործընթացի որոշակի փուլի գալուստ և արտացոլում ժամանակակից գիտության ու տեխնիկայի զարգացման արդյունքները: Համաշխարհայնացման, որպես երևույթի և գործընթացի, բարդությունը պայմանավորված է նրա պարադոքսայնությամբ: Մի կողմից համաշխարհայնացման արմատները գալիս են արևմուտքից, որը պատմականորեն կապված է քրիստոնեության հետ, մյուս կողմից նրան բնորոշ է ընդգծված աշխարհիկությունը:

Կարելի է ասել, որ հենց քրիստոնեության մեջ առկա է համաշխարհայնացման գաղափարը. Եկեղեցին ընկալվում է որպես տիեզերական մարմին, որն իր գլխի՝ Քրիստոսի իշխանության ներքո համախմբում է բոլոր ազգերին ու տեղական մշակույթները: Սակայն երբ համեմատում ենք քրիստոնեական «համաշխարհայնացումը» ներկայիս համաշխարհայնացման հետ, ակնհայտորեն տեսանելի են դառնում բազմաթիվ սկզբունքային տարբերություններ: Սուրբգրային սրբազան պատմությունը, որը շարունակվում է Եկեղեցու պատմության մեջ, փրկության պատմություն է, մինչդեռ պատմությունը ժամանակակից ընկալմամբ սոցիալ-տնտեսական հաստատությունների և տեխնիկական միջոցների զարգացում ու կատարելագործում է ենթադրում: Քրիստոնեության մեջ մարդու կողմից աստվածաստեղծ աշխարհի ճանաչողությունը չի սահմանափակվում զուտ արտաքին աշխարհի

յուրացմամբ, այլ ունի Աստծո ճանաչողության բարձրագույն նպատակ, ըստ Պողոս առաքյալի խոսքի՝ «ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, հայտնված է նրանց, քանզի Աստված ինքը հայտնեց այն նրանց» (Հռոմ. 1:19-20): Ուստի տիեզերական Եկեղեցին նախևառաջ ի Քրիստոս բոլոր հավատացյալների հոգևոր միությունն է: Ընդ որում եկեղեցու տիեզերական կամ ընդհանրական բնույթը բնավ չի բացառում կամ մերժում ազգային և մշակութային այն յուրատիպ ձևերը, որոնց մեջ քրիստոնեությունը պատմության ընթացքում գտել է իր մարմնավորումը:

Համաշխարհայնացումն առաջին պլան է մղում համաշխարհային հանրության հետաքրքրությունները, մասնավորապես այն հաստատությունների ու կազմակերպությունների, որոնք արտահայտում ու պաշտպանում են այդ հետաքրքրությունները: Բնականաբար համաշխարհայնացման շարժիչ ուժը դառնում են համաշխարհային հանրության՝ տնտեսական ու քաղաքական իմաստով առավել զորեղ անդամները: Սա հանգեցնում է այն բանին, որ ավելի թույլ մասնակիցները կախման մեջ են հայտնվում՝ ստիպված լինելով իրենց հետաքրքրությունները ենթարկեցնել համաշխարհայնացման առաջնորդների հետաքրքրություններին: Համաշխարհայնացումը լարում է առաջացնում համընդհանուրի և մասնավորի, այսինքն՝ անհատական և խմբային հետաքրքրությունների միջև: Այս իմաստով կարևոր է ուշադրություն դարձնել այն սպառնալիքներին, որ համաշխարհայնացումը ներկայացնում է առանձին ազգային, մշակութային ու կրոնական հանրույթների համար:

Այսօր մեծ թափ ստացած համաշխարհայնացման գործընթացները նպատակ ունեն ճնշելու տեղական մշակույթները հանուն ինչ-որ «համընդհանուր արժեքների»: Քրիստոնեական պատկերացումը մարդու և աշխարհի մասին պայմանավորված է այն ընկալմամբ, որ մարդը պատկանում է ոչ միայն իր տեղական մշակույթին, այլև ողջ մարդկությանը՝ միավորված Աստծո մեջ: Սակայն վերջին շրջանում այդ պատկերացումները կտրվել են ինչպես իրենց աղբյուրից՝ քրիստոնեական հավատից, այնպես էլ մարդու գոյության վերջնական նպատակից՝ Աստծուց: Աշխարհականացման հետևանքով աշխարհի ճանաչողության ու յուրացման գործընթացներն ու մշակույթը, որոնք նախկինում անբաժանելի էին քրիստոնեական հավատից, ձեռք են բերել միանգամայն երկրային ու աշխարհիկ բնույթ՝ զուրկ հոգևոր խորությունից ու վերերկրային բարձրությունից: Ներփակվելով ինքն իր մեջ՝ մշակույթը կորցրել է դրական զարգացման ունակությունը: Քաղաքակրթությունը՝ կառուցված պահի շահավետության, բարոյապես անկատար մարդու՝ «միայն կենցաղային պահանջմունքների բավարարման» իդեալի վրա, դառնում է անկենսունակ, քանի որ չի համապատասխանում մարդ էակի սկզբնական բնությանը: Քրիստոնեական ընկալմամբ՝ մարդը կոչված է ոչ թե պարզապես ֆիզիկական գոյության, այլ իր մեղսականության հաղթահարման ու հոգևոր զարգացման, ինչպես Պողոս առաքյալն է ասում, հասնելու աստվածային կոչման նպատակակետին՝ Քրիստոս Հիսուսով (Փիլ. 3:14): Միայն այդ գիտակցությամբ մարդը կարող է հաղթահարել կյանքի ընթացքում իր առջև ծառայած բազմաթիվ դժվարություններն ու

խոչընդոտները: Այսպիսով՝ մարդու խնդիրը ոչ միայն իր մեջ և աշխարհում առկա չարի դեմ պայքարն է, այլ հատկապես բարու արարումն ու հաստատումն աշխարհի վրա: Առաջին հայացքից կարող է թվալ, թե վերոնշյալը կապ չունի համաշխարհայնացման խնդիրների հետ, սակայն դա այդպես չէ: Համաշխարհայնացումը, որպես աշխարհիկ մշակույթի զագացման որոշակի փուլ, մեր առջև դնում է մի շարք հարցեր մարդու և ժամանակակից պատմական գործնթացներում նրա դերի ու նշանակության մասին: Ըստ էության խնդիրը հետևյալն է. արդյոք հոգևոր առումով ազատ և բարոյապես պատասխանատու մարդը կդառա ինչ-որ թվացյալ «օբյեկտիվ գործնթացների» գերին, որտեղ նրա անձը կլինի «պատմության մեքենայի» գործիքներից մեկը, թե կկարողանա պահպանել և գործնականում իրացնել իր արժեքը որպես Աստծո պատկեր և նմանություն:

Քրիստոնեական տեսանկյունից՝ քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլի գլխավոր վտանգը կեցության հոգևոր չափորոշման մերժման և սկզբունքային աշխարհիկության մեջ է: Այսօր եկեղեցու համար կարևոր խնդիրներից մեկն այն է, որ համաշխարհայնացումը չդառնա Աստծուց աշխարհի հեռացման ճանապարհ: Աստվածաբանական տեսանկյունից լավագույն լուծումը վերադարձն է սուրբգրային և քրիստոնեական ուղղափառ այն ընկալմանը, որի համաձայն՝ աշխարհը ներփակ, ինքնավար ու ինքնաբավ երևույթ չէ, այլ Աստծո ստեղծագործությունը՝ հանձնված մարդու խնամքին, և մարդը որպես Աստծո պատկեր և նմանություն կոչված է բարոյական ու հոգևոր կատարելության՝ ինչպես պատվիրում է

Քրիստոս. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ.5:48): Սա մարդկային կեցության վերջնական նպատակը, որին իրականում պիտի ծառայեն հասարակական գործընթացներն ու հաստատությունները:

Համաշխարհայնացումը, որ այսօր թելադրում է նոր աշխարհակարգի ուղղվածությունը, կարող է զանազան բացասական հետևանքներ ունենալ հանգեցնելով ինքնուրույն մշակույթների քայքայմանն ու հասարակության կրոնաբարոյական արժեքների ոչնչացմանը: 21-րդ դարում համաշխարհայնացումը ներկայանում է ոչ թե որպես տարերային գործընթաց, այլև նպատակաուղղված ռազմավարություն, որում տեղ չունեն ոչ միայն առանձին ազգեր՝ իրենց պատմությամբ, յուրատիպ մշակույթով ու ինքնուրույնությամբ, այլ նաև ազգային պետությունները: Համաշխարհայնացման կողմնակիցները գիտակցում են նաև այն հանգամանքը, որ համաշխարհայնացման այսպես կոչված «համընդհանուր ազատ շուկայի»՝ որպես զարգացման միակ հնարավոր ու անայլընտրանքային ճանապարհի գաղափարի իրացման համար, անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին միավորել նաև հոգևոր մակարդակում: Այստեղ խոսքն արդեն ոչ թե «նոր համաշխարհային կարգի» գաղափարական, այլ կրոնական հիմքի մասին է, որը պետք է ստիպի մարդկությանը հաշտվելու ազգային պետությունների ու կեցության ավանդական ձևերի համար քայքայիչ դրսևորումների ու հետևանքների հետ²: Ուստի այսօր «նոր համաշխարհային կարգի» ներկայացուցիչներն իսկական պատերազմ են

² О.Н. Четверикова, Религия и политика в современной Европе, М.2005, с.44-45.

հայտարարել քրիստոնեությանը, որը համաշխարհայնացման ճարտարապետները փորձում են փոխարինել «գլոբալ կրոնական շուկայով», ուր կա ամեն ինչ՝ էզոտերիկա, մոգություն, նեոհեթանոսություն, օկուլտիզմ և այլն, բայց չկա Աստված: Նրանց կարծիքով՝ «քրիստոնեությունը պետք է վերանա, որպեսզի իր տեղը զիջի գլոբալ կրոնին և նոր համաշխարհային կարգին»³: Դրա լավագույն ապացույցն այն փաստն է, որ Եվրոպական միության Սահմանադրության նախագծում փաստաթղթի մշակողները ներառել «կրոնական տարրը»՝ Եվրոպային զրկելով նրա քաղաքակրթական հիմքը հանդիսացող քրիստոնեական բաղկացուցիչից: Ծայրահեղ բազմազան աշխարհայացքային համակարգերի արդյունքում ժամանակակից արևմտյան աշխարհում այսօր հաստատվել է կրոնական ու բարոյական այնպիսի բազմախոհություն, որը, մեղքն առաքինության տակ քողարկելով, հանգեցնում է անձի հոգևոր ու բարոյական խորը անկման: Համաշխարհայնացման արագընթաց դարաշրջանը գնալով ձեռք է բերում «առանց Աստծո կրոնի դարաշրջանի» հատկանիշներ, իսկ ամենկարևորը՝ քրիստոնեական բարոյական արժեքների դուրսմղումը հասարակական կյանքից առաջացնում է հոգևոր վակուում, որն արագորեն լցվում է մարդկային կեցության համար չափազանց վտանգավոր երևույթներով:

Վերլուծելով ժամանակակից աշխարհում տեղի ունեցող համաշխարհայնացման գործընթացները՝ կարելի է առանձնացնել այդ երևույթին բնորոշ հետևյալ կողմերը.

³ Նույն տեղում, c.57.

1. Հոգևոր-բարոյական արժեքների ավանդական համակարգի ոչնչացում: Տվյալ երկրի մշակույթին օտար արժեքների ներդրում: Հասարակական հարաբերությունների զանգվածային վերանայում և դրանց կառուցում սկզբունքորեն այլ հիմքի վրա՝ բացառելով ավանդական հաստատությունների, այդ թվում նաև Եկեղեցու հնարավոր ազդեցությունը հասարակական գործընթացների վրա:

2. Իշխանության վերազգային ու վերպետական կենտրոնների ու ազդեցության մեխանիզմների ստեղծում՝ արհամարհելով ազդեցության ենթակա երկրների ազգային ու պետական հետաքրքրությունները: Միջազգային կառույցների նկատմամբ պետական պարտականությունների առավելություն ներպետական պարտականությունների համեմատ:

3. Ժամանակակից տեխնիկական ձեռքբերումների կիրառմամբ մասնավոր ու հասարակական կյանքի վրա համակողմանի կառավարման հաստատում: Մարդ էակի դիմագրկման միտում և նրա՝ որպես զուտ սոցիալական միավորի, քաղաքական ու սոցիալական տեխնոլոգիաների կիրառման օբյեկտի ընկալում:

4. Ձևավորված ավանդական համակարգերի քայքայմանն ուղղված գործողություններ, դրանց շրջանակներում ապակառուցողական միտումների ընդլայնում և այդպիսով սոցիալական, միջսերնդային, ներկրոնական և միջկրոնական, միջազգային և միջպետական կոնֆլիկտների ստեղծում:

5. Ավանդական բարոյական նորմերի ոտնահարում, անբարոյական միտումների տարածում մշակույթի, քաղաքականության, տնտեսության մեջ և

առօրյա կյանքում, երիտասարդության՝ որպես հասարակության առավել հեռանկարային հատվածի վրա ազդեցության ընդլայնում:

Համաշխարհայնացման գաղափարական հիմքը կազմող վերոնշյալ դրույթներից ակնհայտ են դառնում հնարավոր այն բացասական հետևանքներն ու վտանգները, որոնք կարող են սպառնալ մեծավ մասամբ քրիստոնեական պատկերացումների վրա հիմնված ժողովուրդների ու պետությունների ազգային ինքնագիտակցության ու բարոյական արժեհամակարգի գոյությանը:

Այսօր այդ վտանգներից զերծ չէ նաև հայ ժողովուրդը՝ իր դարավոր քրիստոնեական արժեհամակարգով և ազգային ու մշակութային առանձնահատկություններով: Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցին, որ բացառիկ ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի պատմական ընթացքի և պետականության կայացման վրա, այսօր էլ քաջ գիտակցելով իր առաքելության նշանակությունը հայ հասարակական կյանքում, իբրև հայության հոգևոր միասնության հիմք, հոգևոր-քարոզչական, կրթական, սոցիալական և այլ ոլորտներում իրականացվող ակտիվ աշխատանքների միջոցով հանդես է գալիս որպես հայկական ինքնության, հայ ազգային ու հոգևոր արժեքների պահպանման կողմնակից՝ փորձելով ազգին և պետությանը հնարավորինս հեռու պահել ժամանակակից մարտահրավերների, մասնավորապես համաշխարհայնացման կործանիչ հետևանքներից:

Համաշխարհայնացման գործընթացի բացասական ազդեցությունների հաղթահարման ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում հարկավոր

է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր ու հրատապ հարցերին.

1. Ավանդական արժեքների պաշտպանության համար լիակատար գաղափարախոսության մշակում և կիրառում որպես հասարակական կյանքի անհրաժեշտ բաղկացուցիչ: Ազգային մակարդակով բարոյական խնդիրների կարգավորման գործում եկեղեցու դիրքորոշման արդիականացում և ակտիվ մասնակցություն:

2. Համակեղեցական մակարդակով հոգևոր-բարոյական արժեքների պահպանման համար տարվող աշխատանքների համակարգում: Գործող օրենսդրության սահմաններում ավանդական արժեքները պաշտպանող որոշումների կայացմանը նպաստում: Պայքար ապակառուցողական և ոչ ավանդական պաշտամունքների դեմ:

3. Եկեղեցու և պետության ակտիվ համագործակցություն, քաղաքականությունից անջատ եկեղեցու գործունեության համակեղեցական ու պետական պաշտպանություն, եկեղեցու սոցիալական կարևոր ծրագրերին պետական աջակցություն:

4. Եկեղեցու կողմից երիտասարդության հետ տարվող աշխատանքների ընդլայնում: Հոգևորականաց դասի կողմից քրիստոնեական հոգևոր արժեքների քարոզչություն, հասարակության մեջ լայն տարածում գտած մոլությունների ու արասների դեմ պայքարի միջոցով բարոյական առողջ մթնոլորտի ստեղծում:

5. ԶԼՄ-ների միջոցով բռնության ու անառակության քարոզչության դեմ իրականացվող հասարակական պայքարի պետական պաշտպանություն:

ԶԵԿՈՒՅՑ Բ

Ավետիս Գ. Քալաշյան
փիլ. գիտ. թեկն., դոցենտ

ԿՐՈՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

XX դարի վերջին քառորդում, հատկապես սոցիալիստական համագործակցության փլուզումից հետո, քաղաքական ասպարեզ իջած **միասնական աշխարհակեցության՝** կամ նոր աշխարհակարգի մոդելներն օրգանապես կապվեցին գլոբալիզացիայի քաղաքականությանը: Լինելով համընդգրկուն և միահյուսող քաղաքականություն՝ գլոբալիզացիան սերտորեն հարաբերվում է համամարդկային և քաղաքակրթական այնպիսի խնդիրների հետ, որոնք առնչվում են պետությունների, ժողովուրդների և մարդկանց կենսական շահերի հետ: Գլոբալ գործընթացների պատմական դինամիկայի, ինչպես նաև դրա զարգացման հնարավոր ուղիների և հնարավորությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս հստակորեն սահմանազատել **գլոբալիզմն իբրև քաղաքականություն և գաղափարախոսություն և բնական գլոբալիզացիան:**

Բնական գլոբալիզացիան միջազգային իրավունքների և սուվերենության պաշտպանության դիրքերից խթանում է պետությունների և մարդկանց միջազգային համագործակցությունը, տարբեր տնտեսությունների և

քաղաքակրթությունների (մշակույթների) հարմարվողականությունը համաշխարհային գործընթացների հետ: Միանգամայն այլ է XX դարի 70-ական թվականներին հրապարակ իջած գլոբալիզմի գաղափարախոսությունը և «գլոբալ մենեջերիզմի» պրակտիկան: Միասնական աշխարհակեցություն հաստատելու իր ձգտումներում համաշխարհայնացման քաղաքականությունն ականա առնչվում է ժողովրդագրական, միգրացիոն հոսքերի, ժողովուրդների և ազգերի «ապագենացման», արևմտականացման, ազգամշակութային, անտրոպոսոցիոգենետիկ և բազմաթիվ այլ հիմնահարցերի հետ, որոնց ամբողջությունը կազմում է **գլոբալացման քաղաքականության ոլորտը**: Նկատենք նաև, որ այդ ամենով հանդերձ գլոբալացման արդի քաղաքականությունը հետևողականորեն տանում է դեպի քաղաքակրթությունների բախում: Արմատական այդ փոփոխություններն էլ իրենցով պայմանավորել են XX դարի վերջին քառորդի աշխարհաքաղաքական զարգացումների ընդհանուր ուղղվածությունը և XXI դարի հնարավոր զարգացումների դինամիկան⁴:

Աշխարհի, որպես «բանական էությունների տիեզերական տարածության», մասին ավանդական փիլիսոփայական ըմբռնմանը փոխարինելու եկած համաշխարհայնացման (մոնդիալիզմի) քաղաքականությունը գերխնդիր հռչակելով տնտեսության, քաղա-

⁴ Գլոբալիզմի էությունը բնութագրող հիմնարար որակների մանրամասները տե՛ս Վ. Պոդոյան, Կ. Միրումյան, Ս. Բարաջանյան, Ս. Ստովածատուրով, Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան, Երևան, 2004, էջ 78-79, Политология: Энциклопедический словарь. М., 1993, с. 63-64; Азроянц Э. А. Глобализация как процесс / Материалы постоянно действующего междисциплинарного семинара клуба ученых “Глобальный мир”. М., 2001, с. 4-7; Василенко И. А. Политическая глобалистика. М., 2000, с. 11-33 և այլն:

քականության և մշակույթի համընդհանրական փոփոխությունների առաջնությունը, ձգտում է հիմնավորել, թե այդ ամենը միտված է սպառողական և շուկայական հարաբերությունների արմատավորման միջոցով ժողովուրդների կենսամակարդակի բարձրացմանը և համաշխարհային մասշտաբով բարեկեցիկ կյանքի հաստատմանը: Բայց դա միայն գաղափարախոսություն է: Իրականում գլոբալացման գործընթացները միայն արտաքինապես են նպաստում աշխատանքային շուկայի ընդլայնմանը, աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը, բարեկեցության համընդհանուր բարձրացմանը, հետամնաց երկրների հասարակական-տնտեսական զարգացմանը և կայունության ապահովմանը: Տնտեսության և բաշխման գլոբալ համակարգի ձևավորումն իրականում ուղեկցվում է զարգացած կենտրոն, կախյալ ծայրամաս և թույլ զարգացած կիսածայրամաս տարածաշրջանների կտրուկ սահմանազատմամբ, որի հետևանքով է՛լ ավելի է խորանում հարուստ և աղքատ երկրների և ընդհանրապես հարստության և աղքատության միջև գոյություն ունեցող անդունդը: Իսկ դա, իր հերթին, էապես նպաստում է հասարակական կյանքում դրսևորվող անարդարության և բևեռացման աճին:

Գլոբալացումը փորձում է աշխարհը դարձնել միասնական, նույնացնել գնահատականները, մոտեցումները, տեսակետները: Այն թեև արդիական է դարձնում «մարդկային կապիտալի» հայեցակարգը⁵,

⁵ Այդ հայեցակարգի հիմնադրույթները տե՛ս Макарян А. С. Глобализация и человеческий потенциал: демографическое измерение (международный аспект). М., 2003, с. 150-160; Чешкова М. А. Глобалистика: поиски предмета. М., 2002, с. 13-20.

մյուս կողմից մարդկությանը կանգնեցնում է լուրջ երկրնտրանքների և մարտահրավերների առջև: Եվ այն պետություններն ու ազգերը, որոնք համաշխարհայնացման պայմաններում չեն կարողանում կայուն զարգացում և առաջընթաց ապահովել, դատապարտված են: Գլոբալացումը բարոյաէթիկական արժևորում չունեցող գաղափարախոսություն է, հայեցակարգ, ուսմունք և միաժամանակ պրակտիկա⁶: Ինդուստրիալ և հետինդուստրիալ երկրների համար գլոբալացումն, ավելի ճիշտ «գլոբալ վերահսկողություն չունեցող գլոբալ կառավարումն» իրական է դարձնում «վերազգային քաղաքացիական հասարակության» ստեղծումն ու վերազգային կապիտալի կուտակումը⁷, իսկ անցումային փուլում կամ տնտեսապես կախյալ վիճակում գտնվող պետությունների ու ժողովուրդների համար այն ծայրաստիճան վտանգավոր է⁸:

⁶ Համարելով, որ այդ ամենի արդյունքում էլ աշխարհը ծայրաստիճան բևեռացել է, Պ. Տիլլիհը պնդում է, որ իրավիճակը կարելի է հաղթահարել նոր՝ գլոբալ բարոյականության արմատավորմամբ. «Մենք այլևս չպետք է մտածենք այն մասին, որ վերելքը խոստանում է անսահման լինել, իսկ էներգիայի աղբյուրներն անսպառ են, - գրում է նա, - աշխարհիկ մարդասիրության կործանարար բնույթը ... խարսխվում է նրա մարդակենտրոնության ... բնության նկատմամբ անվիճելի հոգևոր տիրապետության վրա, ինչը **հոգևորն իջեցնում է իրեն անհամապատասխանող մակարդակի և բնությունը՝ սպառման օբյեկտի ստատուսի**», տե՛ս Тиллих П. История и Царство Божие / Философия истории. Антология. М., 1994, с. 237-238.

⁷ Տե՛ս **Johnston F.** The Modern Mobility of International Labor Forces. New York, 2002, p. 30-34: Տե՛ս նաև **Gray J.** False Dawn: The Delusions of Global Capitalism. London, 1988, p. 64-70.

⁸ Հայեցակարգայի այդ մոտեցման առանձին տեսանկյունների մանրամասները տե՛ս **Глобализация и устойчивое развитие: проблемное поле и возможные сценарии / Материалы постоянно действующего междисциплинарного семинара клуба ученых “Глобальный мир”**. М., 2002,

Հպանցիկ ուսումնասիրությունն անգամ թույլ է տալիս պնդել, որ **համաշխարհայնացման և ազատականացման արդի քաղաքականությունը կարող է անդառնալի ազդեցություն ունենալ ազգերի և ժողովուրդների պատմության համար:** Պատճառն այն է, որ եթե բնական գլոբալացման պայմաններում հասարակական և քաղաքակրթական արժեհամակարգերը գործառնում են տվյալ ազգության կենսապայմաններին համապատասխան, ապա «գլոբալ մեսիանիզմը» մի կողմ է նետում ազգայինը և առաջին պլան է մղում «համաշխարհային ներդնողների տնտեսական շահերը»⁹: Ահա թե ինչու գլոբալիզմը երբեմն անվանում են «4-րդ աշխարհամարտ»՝ պատերազմ, քանի որ այն ձեռնոց է նետել ավանդական հասարակական կյանքի տնտեսական, գաղափարախոսական, ազգահոգեբանական, քաղաքակրթական, տեղեկատվական, տեխնոլոգիական, մշակութային, բարոյական և այլ ոլորտերին:

Լուրջ մարտահրավերներ են ձևավորվել նաև միջքաղաքակրթական ոլորտում, քանի որ **համաշխարհայնացումը հանդես է գալիս ազգային, հասարակական արժեքների և մշակույթի համընդհանրացման պահանջով:** Այդ միտումներն արդեն իսկ արտացոլված են զանգվածային լրատվամիջոցներում, մշակույթի բոլոր ոլորտներում և անթաքույց նպատակ են հետապնդում **համահարթեցնել լեզվամշակութային ինքնատիպությունն ու առանձնահատկությունները, հաղթահարել ազգային ինքնությանը, երկրորդական դեր հատկացնել**

с. 21: Ст'у նաև **Gray J.** False Dawn: The Delusions of Global Capitalism, p. 80.

⁹ Ст'у **Бек У.** Общество риска: на пути к другому модерны. М., 2000, с. 99.

ազգային պետություններին¹⁰, ազգերի պատմությանը և մշակույթին: Այդ բնագավառում համաշխարհայնացումն ուղղակի հակադրվում է ազգայինին: Իսկ դրանից միանգամայն օրինաչափորեն հետևում է, որ ազգային ինքնության պահպանումն անհրաժեշտաբար պահանջում է, որպեսզի ազգամշակութային ընդհանրությունները հակադարձեն գլոբալիզացիայի ապազգային միտումներին:

Այդ ամենով հանդերձ չպետք է աչքաթող անել, որ **գլոբալացվող հասարակությունն ունի իր կոնկրետ հասցեատերը՝ երիտասարդությունը:** Նրան են հասցեագրված արևմտյան (ամերիկյան և եվրոպական) «համամարդկային և ազատական քաղաքակրթական արժեքները»: Եվ քանի որ «... մարդկային ունիվերսումը վերափոխելը ստեղծագործական յուրահատուկ ունա-

¹⁰ Համաշխարհայնացման քաղաքականության տեսաբանները հրամայական են համարում իշխանության գլոբալ կառույցի ստեղծումը: Այդ պահանջի հիման վրա Յա. Տինբերգենի և «Հռոմեական ակումբի» կողմից 1970-ական թվականներին ասպարեզ նետվեց «համաշխարհային ինստիտուտներ» ստեղծելու նախագիծը, որում հստակորեն ուրվագծված է նաև «համաշխարհային կառավարություն» հաստատելու գաղափարը (80-ականներին այդ մոտեցումը հայեցակարգվել է Մ. Գերնեի, Բ. Գրանոտյեի և այլոց աշխատություններում): 1990-ականներին «համաշխարհային կառավարության» գաղափարը տեղը զիջեց «գլոբալ համագործակցության» նախագծին: Վերջինս թեև **աշխարհաքաղաքական ոլորտի հիմնական սուբյեկտներ էր համարում ազգային պետություններին**, միաժամանակ պնդում էր նաև, որ «արդյունավետ գլոբալ կառավարման համար» ազգային պետությունները պետք է զիտակցեն, որ «համատեղ գործունեությունն» այլընտրանք չունի, քանի որ միտված է այնպիսի աշխարհակարգի ստեղծմանը, որի արմատական տարրերն են քաղաքացիական հասարակարգը և ժողովրդավարությունը: Այսօր ինտենսիվ կերպով մշակվում է նաև **«պետության նոր մոդելը»**, նոտկրատիայի («բանական ոլորտի» (բարոյական-բանական) ժողովրդավարության) ստեղծումը, որը պետք է արտահայտի ոչ թե մեծամասնության, այլ բացառապես **բանական որոշումների** էությունը:

կություն է»¹¹, այդ ամենի հաշվարկով էլ «արևմտականացման» և «ապագայնացման» համար ասպարեզ են նետվել տեղեկատվական-տեխնոլոգիական միջոցները և «զանգվածային մշակույթի մոդելները», որոնք նպատակ են հետապնդում «որակապես փոխել» երիտասարդության մտահորիզոնը և հոգեկերտվածքը: Եվ այդ ամենն աներկբա վկայում է, որ համաշխարհայնացման քաղաքականությունն աճող սերնդի և երիտասարդության համար աշխարհում նախատեսում է «ազգայինից մաքրված», անորոշ ու անկանխատեսելի «նոր ցեղային մարդ» դառնալու և «զանգվածային մշակույթի» կրող լինելու հեռանկարը:

Հանրաճանաչ է, որ տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական և միջազգային մասշտաբի այլ փոխազդեցությունների համակարգում ուրույն տեղ են գրավում մշակութային հարաբերությունները: Առավել ևս, որ «մշակույթների երկխոսության աշխարհը բարոյական աշխարհ է, դրա համար էլ այն չի կարող սահմանափակվել միայն որևէ կոնկրետ համակարգով, մշակույթների երկխոսության աշխարհը գտնվում է շարունակական կայացման և զարգացման ոլորտում ... Եվ այսօր գլոբալ աշխարհ արարելիս՝ մարդկությունը պարտավոր է քննարկել հնարավոր բոլոր վարկածային այլընտրանքները»¹²: Հակառակ պարագայում «վերագային քաղաքացիական հասարակությանը» միտված գլոբալացման քաղաքականության տրամաբանությունն անխուսափելի է դարձնում ազգերի և պետությունների ինքնությունը բնորոշող սուբյեկտիվ գործոնների՝

¹¹ См. у **Василенко И. А.** Политическая глобалистика, с. 31.

¹² Նույն տեղում:

քաղաքակրթությունների համահարթեցումը և կամ որ նույնն է՝ ժողովուրդների «ապամշակութացումը»:

Բարոյական նպատակադրվածությունից զերծ այդ մեթոդների կիրառման արդյունքում գլոբալացվող աշխարհը ոչ միայն կդառնա է՛լ ավելի անորոշ ու անկանխատեսելի, այլև գործընթացի հետևանքով կարող են «ծերանալ» և իսպառ վերանալ թե՛ քաղաքակրթությունները և թե՛ ազգերը (ազգային ինքնությունը):

Գլոբալացվող աշխարհակառույցի հիմքը համարվող «վերազգային քաղաքացիական հասարակություն» ձևավորելու օրգանական տարրերից մեկն էլ «գլոբալ ռեսուրսների» հիման վրա «գլոբալ գիտակցության» ձևավորումն է, որը կյանքի կոչելու տեխնոլոգիաների համակարգում առանձնահատուկ դերակատարություն է վերապահվում տեղեկատվական տեխնոլոգիաների արմատավորմանը և ՋԼՄ-ներին: Իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ **«քաղաքակրթությունը զարգացնելու և ընդհանրականացնելու»** ծրագրի իրագործումն ինքնին հասկանալի պատճառներով հնարավոր է համարվում բացառապես աշխարհի բոլոր տարածաշրջանները «գլոբալ համախմբելու» ճանապարհով: Այդ նպատակին է ծառայեցվում նաև «գլոբալ ռեսուրսների» (տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինտերնետային և ՋԼՄ հաղորդակցություն) ներդրումը, որը համաշխարհայնացման ծրագրերում **հետամուտ է տարբեր երկրների և քաղաքակրթությունների յուրահատուկ միավորմանը:** Դա մարտահրավերների ամբողջական ու բավականին կենսունակ մի համակարգ է, որը մեծ ազդեցություն ունի հատկապես հասարակու-

թյան առավել ճկուն և առավել դինամիկ հատվածի՝ երիտասարդության վրա: Գերազանցապես հասարակական այդ խավին է «առաջարկվում» համաշխարհայնացման և ազատականացման «արժեքները», ինչպես նաև՝ «եվրոպական ընտանիքին ինտեգրվելու» պահանջները: Իսկ գերնպատակն արևմտյան (ամերիկյան-եվրոպական) մշակույթին ինտեգրվելու ճանապարհով նոր՝ **«զանգվածային մարդու» կամ «նոր ցեղային մարդու» ձևավորումն է:**

Այդ «նորը» նախորդ սերունդներից որակապես պետք է տարբերվի մեկ հիմնական հարցում. սեփական հոգևոր արժեհամակարգը, աշխարհընկալումը և աշխարհայացքը նա պետք է ձևավորի «Էլեկտրոնային տեղեկատվության» հենքի վրա և պետք է վերարտադրի «զանգվածային մշակույթի» տեսքով: Մանիպուլյատիվ այդ տեսությունների արմատավորումը փաստում է, որ ա) գլոբալացումը ձգտում է կյանքի կոչել մշակույթի ավանդական արժեքներից զերծ «նորաստեղծ» ժողովրդական զանգված, բ) «զանգվածային մշակույթի» ներդրմամբ և ազգային արժեքների «ապագենացմամբ» փորձ է կատարվում «ես»-ը վերածել «ընդլայնված (տեղեկատվական) հասարակության անդամ «մենք»-ի, գ) հոգևոր կյանքում աննախադեպ ուժեղանում է «զանգվածային գիտակցությունը» և «միօրինականացումը», դ) ստեղծվում և հասարակական ու անհատական կեցության մեջ արմատավորվում է «վերազգային ստանդարտներին» լիովին համահունչ «նոր գիտակցություն»:

«Միջմշակութային հաղորդակցության» և «քաղաքակրթությունների ներդաշնակեցման» գլոբալիստական քաղաքականության տեխնոլոգիական

մոդելները լուրջ մարտահրավերներ են առաջադրել նաև կրոններին: Այդ մարտահրավերները **պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝** ավանդական կրոնական արժեհամակարգերի «աստիճանական սահմանափակում» և երկրորդ, գլոբալիզմի արժեքներով սնված և ապագային ուղղվածության կրոնական նոր շարժումներ, դենոմինացիաներ, ներփակ համայնքներ և խարիզմատիկ խմբեր «արտադելու» և արտահանելու պրակտիկա: Ուղղակի կամ միջնորդավորված տեսքով ավանդական կրոններին են հակադրված նաև «զանգվածային մարդու», «զանգվածային մշակույթի», «նորաստեղծ ժողովրդական զանգվածի», «զանգվածային գիտակցության» և հոգեկերտվածքի մանիպուլյատիվ փոփոխություններին միտված այլ հայեցակարգերը, որոնք կոչված են աստիճանաբար հաղթահարել ազգային մշակույթի, գաղափարախոսության, հոգևոր արժեքների, հոգեկերտվածքի և ինքնության ավանդական ընթրնումները, հավասարապես նաև՝ ազգայինից օտարումը: Իսկ գործընթացին ուղեկցող «հոգևոր բարձր արժեքների պահանջը» լրացվում է «նոր» մարդու համար նախատեսված տեխնոլոգիական «զանգվածային մշակույթով» և «նոր անհատականությունների զանգվածի» ձևավորմամբ¹³:

¹³ Այդ հիմնահարցերի ուսումնասիրությանը սոցիոլոգիական գիտությունն անդրադարձել է դեռևս XX դարի 60-ական թվականներին: **Ապագայի կանխատեսելի վարկածներն ուսումնասիրելու հրամայականով ասպարեզ է իջել ապագայագիտությունը** (ֆուտուրոլոգիան): Է. Տոֆլերի, Գ. Մարկուզեի, Դ. Բելլայի, Ռ. Դարենդորֆի, Ս. Մակլյունի և ուրիշների կողմից այդ հիմնահարցերին նվիրված հիմնարար աշխատություններում առանձնահատուկ տեղ էր հատկացվել ազգակրոնական ինքնությունը հաղթահարած և «հոգևոր կապանքներից» ազատագրված **«միաջամբ մարդու»** հայեցակարգի մշակմանը: Իսկ Զ. Բժեզինսկին «հիմնավորում» է, որ «ազգային, կրոնական ու քաղաքական գաղափարները վերածվել են

Կրոնական կառույցներն ու աստվածաբանները գլոբալացման ապագայնացնող և ապագենացնող քաղաքականությունից մարդու և հասարակության փրկությունը տեսնում են կրոնաբարոյական արժեքները վերածնելու, քարոզչական գործունեությունն ակտիվացնելու, հասարակության և կրոնների միասնացման (միավորման), կրոնական և ոչ կրոնական աշխարհայացքների միջև երկխոսություն և էկումենիկ հարաբերություններ ծավալելու մեջ¹⁴: Կրոնական կառույցների կողմից առաջնային է համարվում նաև

դիցաբանության» և այդ հիման վրա պնդում է, թե **հասարակությունը համամարդկային արժեքների** ներդրման խիստ կարիք ունի: Իսկ այդ «գերխնդիրը» լուծելու համար նա առանձնահատուկ տեղ է հատկացնում այն «տեսական գիտությունների» զարգացմանը, որոնք տեխնոլոգիական-տեղեկատվական հենքի վրա պետք է պատրաստեն «նոր մարդ` մտավոր հրասայլ», տե՛ս **Brzezinski J. Between two Ages: America's Role in the Technotronic Era. New York, 1970, chp. 2-3.**

¹⁴ Գլոբալ հիմնահարցերի նկատմամբ եկեղեցու և հոգևոր դասի դիրքորոշումն արտացոլված է հոգևոր բնույթի հիմնարար փաստաթղթերում` հասարակական ուսմունքներում, ծրագրերում, հայեցակարգերում, էնցիկլիկներում և այլն: Որոշակի տարածում են ստացել նաև կրոնական այն հայեցակարգերը, որոնցում **գլոբալ հիմնահարցերի գլխավոր պատճառ են համարվում հասարակական հարաբերությունների աշխարհականացումը և աթեիզմի տարածումը:** Ազդեցիկ թիվ են կազմում և այն աստվածաբանները, որոնք կրոնի և արդիականության գլոբալ հիմնահարցերի փոխհարաբերությունը դիտարկում են բարու և չարի պայքարի համատեքստում և հանձին ժամանակակից գլոբալ վտանգի` կանխագուշակում են **աշխարհի մոտալուտ (ապոկալիպտիկ) վախճանը:**

Ռուս ուղղափառ եկեղեցին ազգային ինքնության պահպանման գործում առաջնային է համարում նաև վերագգային կորպորացիաների նկատմամբ հասարակական վերահսկողության ուժեղացումը, կազմավորում է բարոյականության պահպանմանը միտված զանազան նախաձեռնողական խմբեր և կոմիտեներ, որոնք պայքարում են կենսաբանաբժշկական նոր տեխնոլոգիաների ներդրման, ընտանիքի պլանավորումը ծրագրելու և անկանխատեսելի հետևանքներ ենթադրող գլոբալ այլ երևույթների դեմ:

արդարացի աշխարհակարգի և միջազգային բոլոր սուբյեկտների (տնտեսական, քաղաքական, կրոնական) միջև իրավահավասար հարաբերությունների հաստատումը: Հիմք ընդունելով «նախասահմանված, անշրջելի և սրբազան ապագայի» մասին աստվածաշնչական ուսմունքը՝ քրիստոնեական կառույցները **խիստ կարևորում են կրոնի և քաղաքականության միասնությունը**, ինչպես նաև **քաղաքական և կրոնական առաջնորդների պատասխանատվության բարձրացումն ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեծացումը**: Այլ կերպ ասած՝ գլոբալացմանը հակադրվելու հնարավոր տարբերակներից է համարվում քաղաքական իշխանության, հասարակության, կրոնական առաջնորդների և կրոնական համայնքի միջև բաց հարաբերությունների, հավասարապես նաև քաղաքական ու կրոնական կորպորատիվ շահերի նկատմամբ իրավունքի և իրավականության գերակայության հաստատումը:

«Գլոբալացվող իրականության» հիմնահարցի կրոնական-աստվածաբանական ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ գլոբալիզմի տեսաբանները հրապարակ են նետել **համամարդկային արժեքների առաջնության վարկածը**: Այդ նոր արժեհամակարգն անխուսափելիորեն ենթադրում է «ազգային սահմանափակությունից» և առօրյա այլ «կապանքներից ու նախապաշարումներից» զերծ «գլխակցության ազատականացում», հասարակության «հումանիզացում» և «ժողովրդավարացում», որոնց ձևավորման հիմքի որակով հրամցվում է **արևմտականացումը**: Այսօր ժողովուրդներին ու ազգերին է հրամցվում հասարակական, քաղաքակրթական, մշակութային և

կրոնական գործընթացները «կանխամտածված կերպով կառավարելու» անխուսափելիության վարկածը, որով փորձ է կատարվում «հիմնավորել», թե իբր անցյալի հոգևոր կյանքը գործառնել է «սահմանափակ գիտակցության շրջանակներում», մարդկանց մեջ առաջացրել է «միօրինակություն և ստոր բնագղներ», «անհատականությունը ոչնչացնող միանմանություն»: Նույն նպատակին է ծառայում նաև «գլոբալ հումանիզացման» պահանջը, որը կոչված է հաղթահարելու «հոգևոր կյանքին անհարիր խորթ որակները»:

Հրապարակ են նետվել նաև հայեցակարգեր, որոնք կոչված են արմատավորելու այն պատկերացումը, թե իբր պատմական առաջընթացում ժողովուրդները կորցրել են «գաղափարները համեմատելու ունակությունը», որ «ազգերի ճակատագիրն այժմ որոշվում է ոչ թե պետական այրերի խորհրդակցություններում, այլ՝ ամբոխի հոգում»¹⁵ : «Մտանդարտացված ու յուրատիպ հոգևոր նոր իրականություն ստեղծելու» գլոբալիստական պահանջը ենթադրում է ազգային տարանջատ (այդ թվում՝ արմատական և ազգայնական) արժեքները «համամարդկային և զանգվածային նոր արժեքներով» փոխարինելու գերխնդիրը: Վերջինս ենթադրում է գլոբալացվող հասարակության պահանջներին բավարարող նոր արժեհամակարգերի և դրանցից բխող աշխարհաքաղաքացիական նոր հարաբերությունների, կրոնական և բարոյական նորմերի ու չափանիշների հաստատում: Իսկ քաղաքակրթական նախկին արժեքների կարծեցյալ «սահմանափակությունների» հաղթահարումը համարվում է այն հենքը, որն **անհրաժեշտ է միանգամայն նոր՝ «հոգևոր աշխարհակարգ» հաստա-**

¹⁵ Лебон Г. Психология народов и масс. М., 1996, с. 155.

տելու համար: Գլոբալացման փիլիսոփայությունն առաջնահերթություն է համարում նաև «իրեն զանգվածի հետ նույնացնող մարդու ազատականացումը», «հոգևոր բարձր արժեքներ» կրող և «նոր իրականության պահանջների համապատասխանող քաղաքակրթական արժեքներ» ձևավորելու պահանջները և այլն:

Համաշխարհայնացման մունետիկները «քառսիթազավորությունը ներդաշնակ «աշխարհակարգով փոխարինելը» և «չարի աշխարհի հումանիզացմանը» միտված «համաշխարհայնացված միասնական հոգևոր իրականություն» ձևավորելու համատեքստում են դիտարկում նաև սրբացման և աշխարհականացման հիմնահարցերը:

Սրբացումը հոգևոր-կրոնական կյանքը բնութագրող հիմնարար հասկացություններից է, մի հատկություն, որով ցանկացած օբյեկտ կամ երևույթ ձեռք է բերում բացառիկ նշանակություն (սրբագործվում է), դառնում անանց արժեք: Հանդես գալով գոյի կարևորագույն բնութագրության որակով՝ կրոններում սրբացումը որակվում է որպես կրոնական գիտակցության համապարփակ կատեգորիա և «բարձրագույն արժեք», ստորաբաժանվում է մակարդակների, բնութագրում կրոնի «հենքային շերտերը»¹⁶ և վերածվում «փրկության պարտադիր պայմանի և նպատակի»¹⁷:

¹⁶ Ֆրանսիացի տեսաբան Է. Դյուրկհեյմը համարում է, որ սրբությունը կրոնի համապարփակ հատկությունն է, և որ կրոնը պետք է սահմանել ոչ թե «Աստված» կամ «գերբնական» հասկացությունների, այլ՝ «սրբացում» հասկացության միջոցով, տե՛ս **Дюркгейм Э.** Элементарные формы религиозной жизни. Тотемическая система в Австралии / **Классики мирового пелигиоведения.** М., 1998, с. 62-63.Սրբացման գործընթացը պարզաբանող հիմնահարցերի մասին տե՛ս նաև **Забияко А. П.** Категория

Հասարակության կայացման և մշակույթի ձևավորման գործընթացները մշտապես ուղեկցվել են սրբացման երևույթներով: Այսպես, հասարակության զարգացման վաղ փուլերում սրբացումն իրականացվել է անմիջական գործունեության և հաղորդակցության շրջանակներում, երբ հասարակական փոխհարաբերությունների ոլորտում ներդրվել են ծեսեր, խորհրդանշաններ և «սրբության» ճանաչողությանը միտված հավատալիքների որոշակի տիպեր: Ավելի ուշ կրոնական կազմակերպությունների ձևավորման արդյունքում այդ միտումներն է՛լ ավելի են խորացել: Ցանկացած հասարակարգ և յուրաքանչյուր մշակույթ նույնպես ունեցել են իրեն բնորոշ սրբացման միտումները և առանձնահատկությունները, որը տարածվել է հատկապես **շնորհով** (խարիզմա) օժտված քաղաքական առաջնորդների վրա ¹⁸:

Արևմտյան Եվրոպայում անհատական և հասարակական կյանքի սրբացումն սկսվել է դեռևս «Կոստանդինոսյան դարաշրջանում», որն իր զարգացման գագաթնակետին է հասել միջնադարում, երբ հասարակական կյանքի աշխարհիկ և սրբազան ոլորտների միջև սկզբունքային ոչ մի սահմանազատում չէր անցկաց-

святости. Сравнительное исследование лингворелигиозных традиций. М., 1998, с. 161-180.

¹⁷ **Otto R.** Das Heilige. Uber das Irrationale in der Idee Gottlichen und sein Verchaitnis zum Rationalen. Gotha, 1927, S. 5, 182.

¹⁸ Մ. Վեբերը գտնում է, որ **շնորհը անհատի յուրահատուկ հատկանիշ է, որը նրան տարանջատում է միջավայրից:** Տեսաբանը պնդում է նաև, որ շնորհի հատկանիշը ձեռք է բերվում ոչ թե կենսագործունեության արդյունքում, կրթությամբ կամ դաստիարակությամբ, այլ՝ «Աստծու և ճակատագրի գթասրտությամբ», տե՛ս **Weber M.** The Sociology of Religion. Boston, 1968, p. 32-33.

վում¹⁹, գերագույն սկզբունք և գլխավոր արժեք էր համարվում Աստված, իսկ մշակույթի՝ առանց բացառության բոլոր ոլորտները գործնականում հանդես էին գալիս որպես այդ սկզբունքի (աստվածային արժեքի) արտահայտություն²⁰:

Աշխարհականացումը, հակառակը, նշանավորել է կրոնից գիտակցության, գործունեության, վարքագծի, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների ազատագրման և բուն աշխարհականացման գործընթացները²¹: Եվրոպայում աշխարհականացման գործընթացներն արմատավորվել և ծավալվել են **լուսավորության դարաշրջանից** սկսած, երբ հասարա-

¹⁹ Sté u **Otto R.** Das Heilige. Über das Irrationale in der Idee Gottlichen und sein Verchaitnis zum Rationalen, S. 61-62: Հմմտ. **Пылаев М. А.**

Феноменология религии Рудольфа Отто. М., 2000, с. 19-23.

²⁰ Միջնադարյան ճարտարապետությունն ու քանդակագործությունը «... Աստվածաշունչ էր քարի վրա», - գրում է Պ. Սորոկինը: Գրականությունն ամբողջությամբ ներթափախված էր կրոնով և քրիստոնեական հավատքով, գեղանկարչությունն աստվածաշնչական թեմաներն ու պուժետները պատկերում էր զծերի և գույների միջոցով, երաժշտությունը բացառապես կրոնական երանգավորում ուներ: Փիլիսոփայությունը գործնականում նույնական էր կրոնին և աստվածաբանությանը, և կենտրոնացած էր բացառապես հիմնական արժեքի կամ սկզբունքի՝ Աստծու գաղափարի վրա, գիտությունն ընդամենն աստվածաբանության ադախինն էր, իսկ բարոյականությունն ու իրավունքը՝ քրիստոնեության բացարձակ պատվիրանների մշակումները: Մանրամասները տե՛ս **Сорокин П. А.** Социодинамика культуры. Кризис нашего времени / **Сорокин П.** Человек. Цивилизация. Общество. М., 1992, с. 430.

²¹ Աշխարհականացման բնութագրական առանձնահատկությունների մասին տե՛ս **Религиоведение** (Энциклопедический словарь), с. 975; **Религия:** Энциклопедия (сост. И общ. ред. А. А. Грицанов, Г. В. Синило), с. 756-757; Энциклопедический словарь **Христианская цивилизация.** М., 2006, с. 764; **Христианство:** Энциклопедический словарь (ред. колл. С. С. Аверинцев, А. Н. Мешков, Ю. Н. Попов), Т. 2 (Л-С), с. 539-540; **Encyclopaedia of religion and ethics** (ed. by James Hastings). V. 11, p. 452-5-453; Vacant A. Dictionnaire de Theologie Catholique, p. 561-562 և այլն:

կական կյանքում ծանրակշիռ դեր է կատարել **ակտիվ գործառնող սուբյեկտի** գաղափարը, իսկ մարդու սուբյեկտիվ գործունեության ազդակ և դրդապատճառ է հռչակվել բանականությունը: Այդ հենքի վրա է ձևավորվել նաև մարդու իրավունքների մասին ուսմունքը²²:

Եվրոպայում բուրժուական հարաբերությունների հաստատումն օբյեկտիվորեն խթանել է քաղաքական և քաղաքացիական ազատությունների, այդ թվում խղճի ազատության և «անհատական հոգևոր կյանքի» մասին ուսմունքների ծավալմանը²³: Հասարակական կյանքում աշխարհականացման միտումները մեծապես նպաստեցին այն բանին, որ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և

²² Աշխարհականացման և մարդու իրավունքների լուսավորչական ըմբռնման մանրամասներին կարելի է ծանոթանալ XVII դարի ֆրանսիացի փիլիսոփա Կ. Հելվեցիուսի կողմից մարդու մասին առաջադրված հայեցակարգի օրինակով (տե՛ս **Гелвеций. О человеке / Гелвеций. Соч. В 2-х томах, Т. 1, М., 1964, с. 219-283**): Արդեն XVII դարի կեսերին Եվրոպայում առաջին անգամ հաստատվեցին աշխարհիկ ծառայողների ինստիտուտները և հասարակական կյանքի իրավական կարգավորումն ու կրթության ղեկավարումը եկեղեցուց անցավ աշխարհիկ իշխանությունների իրավասության տակ: **Աշխարհականացման միտումները ներթափանցեցին նաև գիտության և մշակույթի ոլորտ:** XVII-XVIII դարերում Եվրոպական մշակույթում տիրապետող դարձավ «հավատի և սկզբունքի, աշխարհիկ և հոգևոր սկիզբների բաժանման» տեսակետը: Այդ հիման վրա էլ Ֆ. Բեկոնը, Ռ. Դեկարտը, Գ. Գալիլեյը և Ի. Նյուտոնը առաջադրեցին աշխարհի գիտական նոր պատկերը:

²³ Այդ շարժման տեսաբանները պաշտպանում էին նաև կրոնի հեղինակությանն ուղղակի հակադրվող «անհատական հոգևոր կյանքի» հայեցակարգը: «Հավատի հարցում ես հաշվետու եմ միայն ինքս ինձ, - այդ կապակցությամբ գրում է Հելվեցիուսը, - Ոչ մի թագավոր, ոչ մի պապ իրավունք չունի հետապնդել ինձ կարծեցյալ հանցանքի՝ այն բանի համար, որ ես այնպես չեմ մտածում, ինչպես իրենք: Բնությունից ես մտածելու իրավունք եմ ժառանգել և ասում եմ այն, ինչ մտածում եմ», **Гелвеций. О человеке, Т. 1, с. 226.**

բուրժուական այլ երկրներում XIX դարում եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց: Բազմաթիվ գործոններ վկայում են նաև, որ արևմտյան աշխարհի **աշխարհականացման միտումները շարունակ խորանում են** նաև արդի փուլում²⁴: Եվ այդ ամենն էլ թույլ են տալիս եզրակացնել, որ ժամանակակից զարգացած երկրների հասարակական կյանքում արմատական փոփոխությունների է ենթարկվել կրոնի, հավատի և եկեղեցու տեղն ու դերը: Ավելի ճիշտ կլինի ասել՝ **արդի արևմտյան հասարակության, անհատի և մշակույթի ձևավորումը և գործառնությունն ուղեկցվում է աշխարհականացման միտումներով**²⁵: Եվ պետք է

²⁴ Ըստ Պ. Սորոկինի (տե՛ս **Сорокин П. А.** Социодинамика культуры. Кризис нашего времени, с. 444) միջնադարյան արևմուտքի աշխարհընկալման հիմքում ընկած աստվածաշնչական մոտիվներն առավեագույնս արտացոլվել են գեղանկարչության մեջ, բայց աշխարհականացմանը զուգընթաց այդ միտումները նվազել են և արտահայտվում են հետևյալ տեսքով.

	մինչև X դար	XI դար	XII դար	XIII դար	XIV դար	XV դար
կրոնական	81.9	94.7	94.7	97.0	85.0	85.0
աշխարհիկ	18.1	5.3	5.3	3.0	15.0	15.0

	XVI դար	XVII դար	XVIII դար	XIX դար	XX դար
կրոնական	64.7	50.8	24.1	10.0	3.9
աշխարհիկ	33,3	49,2	79,9	90,0	96,1

²⁵ Արդի կրոնագիտության շրջանակներում աշխարհականացման միտումները միանշանակ չեն գնահատվում: Պ. Վան Բուրենն, օրինակ, աշխարհականացումը բնութագրում է որպես «սրբության կորուստ» և վտանգավոր նախադեպ է համարում հասարակական դաշինքի և հասարակարգի պահպանման համար: Նրա համոզմամբ կրոնն առանձնահատուկ դրական դեր է կատարել հասարակական կյանքում, քանի որ ձևավորել է «սրբազան տիեզերքի» մոդել, այն «շղարշել է սրբությամբ», «հռչակել պարտադիր», որով կյանքի հիմքերը (պայմանները) պատել է «սրբության աուրայով»: Նա պնդում է նաև, որ կրոնական պատվիրանները մարդուն տվել են «բացարձակ ու անհակաճառելի» իմպերատիվներ և ընդհանրական նպատակներ, առանց որոնց ոչ մի հասարակարգչի կարող երկար գոյատևել: Իսկ աշխարհականացումը

նկատել, որ համաշխարհայնացման տեխնոլոգիաներում յուրատիպ մեկնություն է տրվում աշխարհականացման այս գործընթացներին, ավելի ստույգ՝ համաշխարհայնացման գաղափարախոսները իրենց նպատակներին են ծառայեցնում նաև այդ ոլորտում վերջին տասնամյակներին ձևավորված արևմտյան սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգերը:

Դրանցից է Տ. Պարսոնսի հայեցակարգը, որն աշխարհականացման երևույթը բնութագրում է որպես հասարակական տեղաշարժերի ընթացքում կրոնի գործառնությունների ձևափոխում և բարեշրջում: Համոզված լինելով, որ հասարակության զարգացումն ընթանում է դիֆերենցիացիայի ուղով, տեսաբանը գտնում է, որ այդ գործընթացում կրոնը ևս կորցնում է նախկին «սրբազան պատկերը», դառնում է հասարակական կյանքի ոլորտներից մեկը և ավելի ու ավելի է վերածվում «մասնավոր գործի»: Բայց դրանից ամենևին էլ չի հետևում, գտնում է նա, թե անհատի և հասարակության համար կրոնը կորցնում է իր նշանակությունը: Թեև կրոնի ազդեցությունը համեմատաբար թուլանում է տնտեսության, քաղաքականության, կրթության և մշակույթի ոլորտում, գրում է նա, այդ ամենը փոխհատուցվում է նրանով, որ կրոնի **ազդեցության ոլորտը տեղափոխվում է անհատական կյանք,**

մարդուն տանում է դեպի այն պատկերացումը, որ «ոչ մի սրբություն գոյություն չունի», որ բացարձակ արժեքները հարաբերական են ու պայմանական, ինչն էլ, վերջին հաշվով, հանգեցնում է կյանքի իմաստի կորստին, տե՛ս **Van Buren P. M.** The Edges of Language: An Essey in the Logic of a Religion. New York, 1972, p. 56-57: Զմնտ.՝ **Barbour J.** Myths, Models and Paradigms: A Comparative Study in Science and Religion. New York, 1974, p. 115-117; **Penelham T.** Religion and Rationality: An Introduction ti the Philisiphi of Religion. New York, 1971, p. 243-245.

ավելի ճիշտ՝ անհատի ներաշխարհ: Արդյունքում հարկադրանքից զերծ և գիտակցաբար հավատն ընտրող անհատի համար կրոնը վերածվում է առաջին **մեծության արժեքի:** Աշխարհականացման արդի պայմաններում կրոնի հասարակական դերի «լավատեսական» գնահատման համար ամերիկացի տեսաբանը մատնանշում է և այն, որ արևմտյան քաղաքակրթությունը ձևավորվել է քրիստոնեական հիմքի վրա: Հետևաբար, գրում է նա, գործառնելով հասարակական միջավայրում, ժամանակակից մարդը դրանով իսկ յուրացնում է քրիստոնեական գաղափարներն ու արժեքները և ուղղակի կամ միջնորդավորված ձևով գտնվում է կրոնական արժեքների ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով էլ **ժամանակակից մարդն իր գործունեությունը կարգավորում է քրիստոնեական բարոյականությամբ և գործում «անտեսանելի դարձած» կրոնական արժեքների ազդեցությամբ:** Այդպիսով, ըստ Տ. Պարսոնսի, «եկեղեցու դիրքերի թուլացումը» կամ «կրոնատաճության անկումը» բնականոն հիմք է դառնում կրոնի և կրոնատաճության այն նոր ձևերի համար, որոնք լիովին համապատասխանում են արդիականության պահանջներին²⁶:

Հասարակության հոգևոր կյանքը գլոբալացնելու ջատագովների տեսական հիմքերից մեկն էլ ամերիկյան մեկ այլ տեսաբան՝ Ռ. Բեյլայի հայեցակարգն է: Նրա համար ելակետային է հանդիսանում այն համոզմունքը, որ ժամանակակից քրիստոնյան «աշխարհականացված քրիստոնյա» է: Նա բնակվում է մի աշխարհում, ուր Աստված բացակայում է, որի պատճառով տիրապետող

²⁶ St. u **Parsons T.** Sociological Theory and Modern Society. New York, 1967, p. 374-380.

է դառնում աշխարհիկ կյանքը: Այդ կյանքում անհատն ինքն է կրում «իր հաջող կամ անհաջող կենսագործունեության ողջ պատասխանատվությունը»: Եվ քանի որ նոր պայմաններում անհատը շարունակ որոնում է իր գոյության իմաստը, այդ որոնումն արդեն իսկ «խորապես կրոնական է»: Այդ ամենի հիման վրա էլ նա պնդում է, որ **աշխարհականացման գործընթացները ոչ թե հանգեցնում են կրոնի ոչնչացմանը, այլ՝ կրոնական կառույցի և կրոնի դերի փոփոխությանը**²⁷:

Այդ համատեքստում հետաքրքրական է նաև բողոքական քահանա Լ. Ջիրինգի մոտեցումը: Նա կրոնը բնութագրում է որպես «մարդկային կեցության սահմանային պահանջումների «հավատքային պատասխան», բայց այնպիսին, որի միջոցով անհատը (հասարակությունը) արտահայտում է իր ինքնությունը, նպատակադրվածությունը, ձգտումները և դրանց իրագործման հույսը: Դա այնպիսի պատասխան է, որը դրսևորվում է հավատալիքների, ծիսակարգի և հոգևոր կյանքը պայմանավորող կենսական այլ կառույցների ամբողջության տեսքով: Այդ մոտեցումը գործնականում «կրոնի կատարյալ բարոյականացման» քարոզ է, քանի որ հեղինակը կրոնական երևույթ է համարում գոյաբանական խնդիրների լուծմանը միտված մարդկային գործունեության բոլոր ձևերը, արժեքային սկզբունքների և իդեալների որոնումները: Եվ քանի որ այդ որոնումները ժամանակային առումով անվերջ են, ապա հավիտենական է նաև կրոնը: Միանգամայն հասկանալի է նաև տեսաբանի կողմից «աշխարհականացում» եզրի նորովի մեկնաբանությունը, համաձայն որի **կրոնը և աշխարհականացումը միմյանց չեն հակադրվում**,

²⁷ Տե՛ս **Bellah R. N.** Civil Religion in America. Daedalus, 1967, p. 241-221.

հետևաբար՝ աշխարհականացման միտումները ոչնչով չեն կարող ազդել կրոնի վրա²⁸:

Այս և նման տեսական լուծումներով հարստացնելով սեփական զինանոցը՝ համաաշխարհայնացման մունետիկներն աշխարհականացման գործընթացներն ամեննին էլ չեն դրամատիզացնում և, անգամ, այն բնութագրում են որպես «դրական գործընթաց»: Նրանց կողմից աշխարհականացման «դրական ազդեցությունը» մեկնաբանվում է որպես անհատական և հասարակական կյանքի «ավանդական հոգևոր արժեհամակարգերը», հավասարապես նաև ավանդական կրոնները «պատահական ու անկարևոր տարրերից մաքրելու գործուն միջոց»: Ընդ որում, աշխարհականացումը երբեմն մեկնաբանվում է հասարակական և անհատական կյանքի բոլոր ոլորտներում և հարաբերություններում «կրոնական նոր արժեքներ» արմատավորելու կամ «հավատքային նոր հարաբերություններ» հաստատելու նշանակությամբ: Սակայն մեթոդաբանական առումով այդ մոտեցումները հիմնովին մերժելի են այն պատճառով, որ **աշխարհականացման և «նոր կրոնական շարժումներ արտադրելու և արմատավորելու» գործընթացներն ամեննին էլ միամակարդակ կամ նույնական երևույթներ չեն:**

Կարծում ենք հիմնահարցի նման լուծումը պրոբլեմային է մի շարք այլ տեսանկյուններից ևս: Այն, որ աշխարհականացումը և «կրոնական նոր շարժումները» նույնական չեն, փաստվում է հասարակական կյանքում դրանց ունեցած դերով և նշանակությամբ: Այդ նույնացումը համոզիչ չէ և այն առումով, որ աշխարհա-

²⁸ Մեջբերումն ըստ Кимелев Ю. А. Современная Западная философия религии, с. 124-127.

կանացունն ու «կրոնական նոր շարժումները» ոչ միասեռ, ավելի ստույգ՝ հակադիր հասկացություններ են: **Կրոնը և աշխարհականացումը բազմամակարդակ հակադիր երևույթներ են, որոնք անհատական և հասարակական կյանքում դրսևորվում են որակապես տարբերվող էությանը**, ինչպես նաև աշխարհայացքային և արժեհամակարգային պատկերացումներով:

Գլոբալացման քաղաքականության արդյունքում սուր վիճաբանություններ են ծավալվել նաև «քաղաքացիական կրոն»²⁹ հասկացության շուրջ:

ԱՄՆ-ի կրոնական պատմության ընդհանրացված վերլուծությամբ **քաղաքացիական կրոնը բնութագրվում է որպես ժողովրդական-ազգային կամ քաղաքական-մշակութային կրոն**³⁰: Ձգտելով հիմնավորել այդ ըմբռնումը՝ Ռ. Բելլան առաջադրում է հայեցակարգային այն պնդումը, որ գոյություն ունի այնպիսի ընդհանրական կրոնական չափանիշ, որը բնորոշ է քաղաքացիական կյանքին և որին հետևում է ամերիկացիների գերակշիռ մասը³¹: Անդրադառնալով քաղա-

²⁹ «Հասարակական դաշինքի» տեսության շրջանակներում «քաղաքացիական կրոն» հասկացությունն առաջին անգամ գործածել է Ժ.-Ժ. Ռուսոն: Նա «քաղաքացիական կրոնը» մեկնաբանում է որպես կրոնական հավատալիքների այնպիսի ամբողջություն, որն աչքի էր ընկնում ընդհանրությամբ, և որը կառավարելու իրավունքը վերապահվում է իշխանությանը: Ռուսոն «քաղաքացիական կրոնին» հակադրում էր «անհատների կրոնը», որը, նրա համոզմամբ մասնավոր գործ պետք է լիներ իշխանությունների համար, այդ մասին տե՛ս **Wimberley R. C. and Christenson J. A. Civil Religion: Social Indicators, and Public Policy / " Social Indicators Research", 1982, p. 211-213; Marty M. E. The New Shape of American Religion. New York, 1959, p. 10; Bellah R. N. Civil Religion in America, p.1-21.**

³⁰ Այդ մոտեցման սոցիալ փիլիսոփայական ըմբռնումների մանրամասները տե՛ս **Bellah R. N. Civil Religion in America, p. 1-21:**

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

քացիական կրոնի «փուլային զարգացման» ուսումնասիրությանը՝ տեսաբանն այդ ոլորտում առանձնացնում է «հասարակության մեջ առկա սրբացման համակարգերի խորհրդանշանների բաժանվածությունը» կրոնական և քաղաքական հատվածների: Քաղաքացիական կրոնի արդի տեսաբանները պնդում են նաև, որ աշխարհում տեղ գտած փոփոխությունների հետևանքով **ավանդական կրոնատածությունն իր տեղը զիջել է անձնական հարցերի ոլորտում դրսևորվող անձնական կրոնատածությանը** և որ հասարակական ուղղվածություն ունի միայն այն «բարձրաշխարհիկ խորհրդանշանների համակարգը», որն ընկած է քաղաքացիական կրոնի հիմքում: Առաջնային համարելով քաղաքացիական հասարակության մոդելը, **համաշխարհայնացման տեխնոլոգիաներում «ընդհանրական կրոն» կամ «ընդհանրական դավանանք» հասկացությունները կիրառվում են բացառապես «ամերիկյան կենսակերպի»՝ ամերիկյանացման համատեքստում:** Ակնհայտ է, որ «քաղաքացիական կրոնի» այդ ըմբռնումն ուղղակի հակադրվում է կրոնի (դավանանքի) ավանդական ըմբռնմանը: Եվ չնայած դրան (գուցեն՝ այդ պատճառով) մերօրյա համաշխարհայնացման գործընթացներում փորձ է կատարվում վերը նշված մոդելն արմատավորել ամենուր: **Եվ քանի որ ԱՄՆ-ում կրոնի հետ կապված հիմնախնդիրները լուսաբանվում և արժևորվում են ոչ այնքան դավանանքի, որքան քաղաքականության համատեքստում,** «նոր աշխարհի կրոնատածության» էությունը բնութագրող նշված պայմաններում էլ ասպարեզ իջավ քրիստոնեության (և ընդհանրապես կրոնի) մի յուրա-

տիպ ըմբռնում, որը կարելի է բնութագրել որպես **«ժողովրդավարական և հանրապետական կրոն»:**

Բնութագրական ևս մեկ առանձնահատկություն: Քաղաքացիական կրոնի «դեմոկրատական և հանրապետական» կողմնորոշման մասին ամերիկյան ըմբռնումն իր ուղղվածությամբ մեծապես **օժանդակում է բացառապես «նոր դարի կրոնների» արդարացմանը** և երբևէ նման ծառայություն չի մատուցել ավանդական կրոններին: Ու թեև այն չունի «աշխարհիկ» ուղղվածություն և ձևավորվել է «կրոնական ավանդույթների» հիման վրա, նրանում հոգևոր-կրոնական արժեքներն ընտրվում և մեկնաբանվում են այնպես, որ դրանք չհակադրվեն ո՛չ «նոր դարի» կրոնական պատկերացումներին և ո՛չ էլ՝ «անհատի սեփական կրոնական աշխարհընկալումներին»: **Դա մի յուրատիպ կրոնական աշխարհընկալում է,** որի կրող «ազատականացված անհատը» ոչ մի հակասություն չի տեսնում ավանդականի ու մոդեռնի միջև: Եվ պետք է նշել, որ գլոբալացման պայմաններում զուտ ամերիկյան շրջանակներում ձևավորված կրոնի նման «ըմբռնումը» մատուցվում է «համամարդկային արժեքի» որակով, որը պարտադրվում է բոլոր քաղաքացիական հասարակություններին: Միաժամանակ, քանի որ «քաղաքացիական կրոն» անխուսափելիորեն «համահարթեցնում» է կրոնական և ազգակրոնական ինքնությունը, դրանով իսկ բազում մարտահրավերներ է առաջադրում ամերիկյանացմանը հակադրվող քաղաքակրթություններին: Այլ կերպ ասած, **պրակտիկ կյանքում քաղաքացիական կրոնի ամերիկյան մոդելի ներդրումն իր հետ քաղաքակրթական համակարգեր է ներմուծում կոնֆլիկտաձին բազում երևույթներ:** Եվ կարծում ենք

այդ ամենի ընդհանրացմամբ կարելի է միանգամայն օրինաչափ համարել այն պնդումը, որ համաշխարհայնացման զարգացումների արդյունքում ձևավորված քաղաքակրթությունների բախումներն ու կոնֆլիկտներն այսօր ծնել են նույնքան գլոբալ ճգնաժամային երևույթներ: Միաբնեռ աշխարհակարգ ստեղծելու կամ որ նույնն է՝ ամերիկանացման մոդելի ազդեցությամբ, պատկերավոր ասած՝ հոգևոր կյանքի գլոբալացման միտումները շատ բանով նմանվում են բաբելոնական աշտարակաշինությանը: **Այդ ամենը հոգևոր-քաղաքակրթական լուրջ մարտահրավերներ են առաջադրել ոչ միայն ավանդական դավանանքներին և ազգակրոնական ընդհանրություններին, այլև՝ քաղաքակրթության և կրոնների ոլորտում գլոբալիզմն արտահանող երկրներին:**

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

XX դարի վերջին քառորդում քաղաքական ասպարեզ իջած միասնական աշխարհակեցության կամ նոր աշխարհակարգի մոդելներն օրգանապես կապվում են համաաշխարհայնացման քաղաքականությանը: Այն արդի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ֆենոմեն է:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող համաաշխարհայնացման գործընթացին բնորոշ կողմերն են.

- աշխարհը միասնական դարձնելը, ազգային արժեքների և մշակույթի համընդհանրացումը
- «ազգայինից մաքրված» «զանգվածային մարդու» և «զանգվածային մշակույթի» ու գիտակցության ձևավորումը
- մասնավոր ու հասարակական կյանքի վրա համակողմանի կառավարման հաստատումը
- բոլոր ժողովուրդների միավորումը հոգևոր մակարդակում
- ընդգծված աշխարհիկությունը:

Համաաշխարհայնացման սպառնալիքների և բացասական հետևանքներն են.

- տեղական մշակույթների ճնշում ու քայաքայում՝ հանուն «համընդհանուր արժեքների»
- ազգայինի անտեսում ու համաաշխարհային ներդնողների տնտեսական շահերի առաջնորդում
- տնտեսության գլոբալ համակարգի ձևավորմանը զուգահեռ կենտրոն-կիսաաձայրամաս-աձայրամաս տարածաշրջանների կտրուկ սահմանազատում,

հարուստ և աղքատ երկրների, հարստության և աղքատության միջև գոյություն ունեցող անդունդի խորացում

- հասարակության կրոնաբարոյական արժեքների ոչնչացում, հոգևոր խորությունից զուրկ նոր մշակույթի ձևավորում
- քրիստոնեության փոխարինում «գլոբալ կրոնական շուկայով» կամ «քաղաքացիական կրոնով»
- ձևավորված ավանդական համակարգերի քայքայում, այդպիսով՝ տարբեր տիպի հակամարտությունների ստեղծում
- հոգևոր-բարոյական արժեքների ավանդական համակարգի ոչնչացում, օտար արժեքների ներդրում:

Այս ամենն ուղղակի կամ միջնորդավորված կերպով հակադրվում է ավանդական կրոններին:

Կրոններին առաջադրված մարտահրավերները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝

1. ավանդական կրոնական արժեհամակարգերի «աստիճանական սահմանափակում»
2. ապագային ուղղվածության կրոնական նոր շարժումներ, խարիզմատիկ խմբեր «արտադրելու» և արտահանելու պրակտիկա:

Համաշխարհայնացման գործընթացի բացասական ազդեցությունների հաղթահարման ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում հարկավոր է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

- ավանդական արժեքների պաշտպանություն, բարոյական խնդիրների կարգավորման գործում Եկեղեցու ակտիվ մասնակցություն

- պայքար ապակառուցողական և ոչ ավանդական պաշտամունքների դեմ
- Եկեղեցու և պետության ակտիվ համագործակցություն
- Եկեղեցու կողմից երիտասարդության հետ տարվող աշխատանքների ընդլայնում
- քրիստոնեական հոգևոր արժեքների քարոզչություն, բարոյական առողջ մթնոլորտի ստեղծում
- բռնության ու անբարոյականության քարոզչության դեմ իրականացվող աշխատանքներ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եկեղեցին և համաշխարհայնացումը (քննարկման նյութեր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավազ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio



actalliance